

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԻԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Դեկտեմբեր 2024

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Սիրելի աշակերտներ.

Դեկտեմբեր է: Կաղանդը կը մօտենայ... Տարուան ամենէն հաճելի եւ ամենէն սիրելի տօներէն մէկն է բոլորին համար: Ինչ տարիքի ալ ըլլանք, մեծ ուրախութեամբ կը սպասենք այս տօնը: Կը զարդարուին մեր տուններն ու դասարանները, կը զարդարուին վաճառատուններն ու ճամբաները: Ամէն կողմ գունատր լոյսեր... Կը լսուին կաղանդի երգեր... Տան մէջ կը պատրաստուին համեղ անուշեղէններ:



Նամակներ կը գրենք Կաղանդ Պապային. անահամբեր կը սպասենք, որ իր կարմիր հագուստը հագած, խոշոր տոպրակը շալակն առած, իր գաւազանը ձեռքին այցելէ մեզի:

Շատ հաճելի է, վայելենք այս ամէնը, սակայն չմոռնանք աղքատներն ու հիւանդները, չմոռնանք մանաւանդ արցախցի, լիբանանցի եւ սուրիացի մեր քոյրերն ու եղբայրները, օգնութեան ձեռք երկարելով իրենց:

Բարի արձակուրդ ձեզի, սիրելիներ. տօնական այս օրերուն մաղթենք, որ խաղաղութիւն տիրէ աշխարհին, նաեւ խաղաղ ու բարգաւաճ օրեր մեր հայրենիքին:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՆԱԻԱՍԱՐԴ

Հայկական տոմարին առաջին ամիսը: Կազմուած է «նաւ» (նոր) եւ «սարդ» (տարի) բառերէն եւ կը նշանակէ «Նոր Տարի»: Նաւասարդ ամիսը ունեցած է 30 օր, սկսած է 11 Օգոստոսին եւ ւարտած՝ 9 Սեպտեմբերին:

Նաւասարդի օրերուն կը հասունան հայկական հողին ու ջուրին բարիքները՝ խաղողն ու տանձը, դեղձն ու ձմերուկը: Հին հայերուն համար 1 Նաւասարդը (11 Օգոստոսը) ժողովրդական խրախմբանքներու, փառատօներու եւ տօնակատարութիւններու օր եղած է: Վանատուր - Ամանոր նաւասարդեան աստուածութիւնը կը համարուէր բերքին պաշտպանը, անօթիները կերակրողը, այգեգործութեան եւ պտղաբերութեան հովանաւորը հայկական դիցաբանութեան մէջ



Այս աստուածութեան արձաններուն մնացորդները կը գտնուին Բագաւանի մէջ, որ հեթանոսական սրբավայր կը համարուի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայերը յատուկ կերպով կը տօնեն Նաւասարդը, որ ամենէն հանդիսատր եւ ուրախալի տօնը կը համարուէր:

Նոր տարին կը սկսէր 1 Նաւասարդին (Օգոստոս) եւ կը տեւէր շաբաթ մը:

Բոլոր հայ ընտանիքները Նաւասարդը կը դիմաւորէին մեծ ուրախութեամբ եւ տօնախմբութիւններով: Այդ օրը ճոխ սեղաններ կը պատրաստուէին՝ յատուկ կերակուրներով եւ ուտելիքներով:

Նաւասարդ-Նախրաթողի գլխատր ուտելիքը կորկոտն էր կամ քաշիկան, որ յատկապէս տարածուած էր Արցախի եւ Սիւնիքի մէջ: Քաշիկա-կորկոտը կը պատրաստուէր ամանորեան գիշերը, ճիշդ այն ատեն, երբ հին տարին կը փոխարինուէր նորով: Քաշիկան շերտ առ շերտ աղով համեմուած ցորեն-ձաւարով ու ոչխարի, այծի, կովու կամ խոզի միսով ուտելիք մըն է, որուն գլխատր սկզբունքը չխառնուած ըլլալն է: Ժողովրդական ընկալումով՝ պէտք չէր խառնուէր, որպէսզի գալիք տարին ալ խառնակ չըլլար:


Տոպրակ կախելու սովորութիւնն ալ կար: Երդիքներէն կը կախէին գոյնզգոյն գուլպաներ, այն ակնկալութեամբ, որ անոնց մէջէն՝ Նոր տարուան նուէրներ կը յայտնուին:

Նաւասարդեան օրերը ազգային-ժողովրդական բնոյթ ունէին: Կ'իշխէին զուարճութիւնը, տօնահանդէսները, երգն ու պարը: Կը մեծարուէին Անահիտ ու Աստղիկ դիցուհիները, ինչպէս նաեւ Վահագն դիցազնը, որոնք ժողովրդին մօտ բարի համբաւ կը վայելէին:



ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ



Բուն անունով Պարոյր Ղազարեան:

Հայ տաղանդաւոր այս բանաստեղծին ծննդեան 100-ամեակն է: Ան ծնած է 24 Յունուար 1924-ին, Արարատի շրջանի Չանախչի (ներկայիս Զանգակատուն) գիւղը: Պարոյր Սեակ աւարտել է ետք Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական բաժինը, իր ուսումը շարունակած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի եւ Մոսկուայի Գրականութեան հաստատութիւններէն ներս:

Պարոյր Սեակ գրել սկսած է իր աշակերտական տարիքին: Ան նշանաւոր դէմք մը եղած է մասնաւորաբար երբ 1959-ին լոյս տեսած է իր «Անլռելի Զանգակատուն» արժէքաւոր վիպերգը, որուն մէջ ան կ'անդրադառնայ Կոմիտասի կեանքին: Սեակի այլ նշանաւոր կտորներէն են. «Եռածայն Պատարագը», «Եւ Այր Մի՛ Մաշտոց Անուն»ը, «Մարդը Ափի Մէջ»ը, «Եղիցի Լոյս»ը...

Պարոյր Սեակ բանաստեղծ ըլլալով, միաժամանակ գիտական լուրջ արժէքներ ստեղծած է գրականութեան պատմութեան (մանաւանդ սայաթնովագիտութեան) եւ գրաքննադատութեան մէջ: Ան 1970-ին ստացած է բանասիրական գիտութիւններու դոկտորական գիտական կոչումը:

Իսկ 1966-ին եղած է Հայաստանի գրողներու միութեան վարչութեան քարտուղարը: Ան վարպետ քննադատ ըլլալուն չէր հանդուրժեր միջակութիւնը, սուտն ու կեղծիքը եւ մարդկային այլ տկարութիւններ: Իր գործերով սիրուեցաւ ժողովուրդին կողմէ, դառնալով հայութեան եւ հայ գրականութեան շահերու իրաւապաշտպանը:

Պարոյր Սեակ զոհուեցաւ 1971 թուականի Յունիս 17-ին, ինքնաշարժի արկածով:



Պարոյր Սեակի նկարը Հայաստանի Հանրապետութեան 1,000-նոց թղթադրամին վրայ



Հայկական դրոշմաթուղթ Պարոյր Սեակի նկարով

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

Մարտիրոս Սարեան ծնած է 16 Փետրուար 1880-ին, Նոր Նախիջեան: Անոր նախնիները եղած են Անի քաղաքէն:

1897-ին յաճախած է Մոսկուայի գեղանկարչութեան, քանդակագործութեան եւ ճարտարապետութեան համալսարանը:

1901-ին առաջին անգամ ըլլալով այցելած է Հայաստան եւ 1902-ին՝ Անի: Ծամբորդութեան ընթացքին ուսումնասիրած է իր ժողովուրդին պատմութիւնը, մշակոյթը, ինչպէս նաեւ յուշարձանները, եւ այս բոլորին դերը մեծ եղած է անոր ստեղծագործութիւններուն մէջ: Սարեան իր գործերով ստեղծած է նոր տեսակի արուեստ, որ ժամանակի մտաւորականութիւնը զայն կոչած է «Սարեանական»:

1915-ի Յեղասպանութեան օրերուն, Սարեան մեկնած է Էջմիածին հայ գաղթականներուն օգնութեան հասնելու:


Աւելի ուշ, 1921-ին, ընտանիքով հաստատուած է Երեւան: Սարեանի ստեղծագործութիւններուն մէջ կան դիմանկարներ (դէմք պատկերող նկարներ), բնանկարներ (բնութիւնը պատկերող նկարներ) եւ Nature Morte (առարկաներ. ինչպէս՝ ծաղիկներ, պտուղներ պատկերող նկարներ): Ան նորագոյն շրջանի հայկական գեղանկարչութեան ազգային դպրոցի հիմնադիրն է:

Մարտիրոս Սարեան ունեցած է անհատական ցուցահանդէսներ Մոսկուայի, Սան Փեթերսպուրկի, Թիֆլիսի, Փարիզի, Երեւանի եւ այլ նշանաւոր քաղաքներու մէջ: Սարեան շահած է մրցանակներ եւ արժանացած՝ շքանշաններու: Նշենք նաեւ, թէ 1928-ին Փարիզի մէջ ցուցադրուած իր աշխատանքներուն մեծ մասը այրած է, դէպի Հայաստան ուղղուող նաւուն վրայ տեղի ունեցած հրդեհին պատճառով:

Յայտնի այս գեղանկարիչը մահացած է Մայիս 1972-ին եւ թաղուած Երեւանի Կոմիտասի անուան պանթէոնին մէջ:

Անոր անձանը կը գտնուի Երեւանի մէջ եւ քաղաքի կեդրոնական պուրակներէն մէկը իր անունով կոչուած է:

2000-ին եւ 2005-ին, Հայաստանի մէջ ստեղծուած են Սարեանին նուիրուած դրոշմաթուղթեր: Այս մեծ գեղանկարիչին դիմանկարը կայ 20,000-նոց թղթադրամին վրայ:



Մարտիրոս Սարեանի «Հայաստան» նկարը



Հայկական դրոշմաթուղթ նուիրուած Մարտիրոս Սարեանի ծննդեան 125-ամեակին



Մարտիրոս Սարեանի նկարը Հայաստանի Հանրապետութեան 20000-նոց թղթադրամին վրայ



Սուրբ Յակոբ Ազգային վաժարան

Սուրբ Յակոբ Ազգային վաժարանի, Սարաֆեան նախակրթարանի վեցերորդ դասարանի աշակերտները, իրենց հայերէնի ուսուցչուհի՝ տիկին Մարալ Անթապեանի հետ, սերտելէ ետք Մուշեղ Իշխանի «Հայ լեզուն տունն է հայուն» բանաստեղծութիւնը, արտայայտած են իրենց մտքերը, հետեւեալ նիւթով.

«Պարկերացուցէք, որ ձեր երագին մէջ կը հանդիպիք Մուշեղ Իշխանին, որ այցելած է ձեր դպրոցը: Բանաստեղծին հետ զրուցելու այս իրօրինակ առիթը օգտագործելով՝ ինչէ՞ր կ'ուզէիք ըսել իրեն»:



Մուշեղ Իշխան

Բարեւ սիրելի Մուշեղ Իշխան.
Վերջապէս եկաք: Շատ ուրախ եմ ձեզի հանդիպելու՝ մեր հայ մառանին մէջ, ուր մեր ճարտարապետ հանճարները մեր դպրոցը կը մեծցնեն:

Նախքան մեզի ձեր բուք ու բորաններուն մասին պատմելը, կ'ուզեմ ձեզի ներկայացնել մեր 50 տարեկան դպրոցը: Հոս տիւ եւ գիշեր կը սորվինք ձեր մասին, նոյնիսկ ցնծութեամբ կը տքնինք նոր ու հետաքրքրական բաներ գիտնալու համար: Յիշեցէք, որ դպրոցներ կան, որոնք խաժամուժներով լեցուն են: Բայց մեր դպրոցը վեհութիւն ունի: Մեր գեղեցիկ մառանը միշտ հայերէն կը խօսի: Մենք օրական մէկ ժամ հայերէն կամ Հայոց Պատմութիւն կ'ունենանք: Մանկապարտէզէն մինչեւ երկրորդական մեր դպրոցը շատ լաւ տեղ մըն է ազգիկներ մեծցնելու: Յիշեցէք, եթէ մէկը պիտի ծուլուի, գիտէք թէ ուր պիտի դրկէք զայն: Կ'ուզէք պտուղի մեր դպրոցէն ներս: Եթէ ես հոս չըլլամ, հոգ մի՛ ընէք, մեր աշխատասէր տնօրէնուհին միշտ հոս է:

Պարոն Մուշեղ, կը խոստանամ ձեզի՝ միշտ կարդալ, գրել ու խօսիլ հայերէն: Ձեր բոլոր գրածները պիտի կարդամ եւ իւրաքանչիւր բառ միտքս պիտի պահեմ: Նոյնիսկ լաւագոյնս պիտի ընեմ, որպէսզի շուրջիններուս հայերէն սորվեցնեմ, որ իմ, ձեր եւ մեր մէկ հատիկ մայր լեզուն է:

Վէմ Աճէմեան

Բարեւ ձեզ, պարոն Մուշեղ Իշխան.
Ես Փաթիլ Ղազարեանն եմ, վեցերորդ դասարանի աշակերտուհի:

Շատ ուրախ եմք, որ մեր դպրոցը այցելեցիք: Այս տարի մեր դպրոցին յիսնամեակն է. ուրեմն մենք շատ բախտաւոր կը զգանք որպէս շրջանաւարտներ: Դուք շատ վեհ պատմութիւններ կը գրէք: Կը յուսամ, որ հայկական դպրոցները դարերու ընթացքին մշտապէս շարունակեն ձեր գրութիւններն ու բանաստեղծութիւնները՝ աշակերտներուն ասանդել: Այնքան կը սիրեմ ձեր գրութիւնները, որ տիւ եւ գիշեր կը կարդամ, նոյնիսկ հարազատներուս կը պատմեմ անոնց մասին:

Նախքան ձեր մեկնիլը, իբրեւ հայ աշակերտուհի, որ հայկական դպրոց կը յաճախէ, կ'ուզէի ձեզի խոստանալ, որ երբ մեծնամ, հայ պիտի մնամ, հայերէն պիտի խօսիմ եւ ինքնութիւնս պիտի պահեմ: Նաեւ օրինակ պիտի դառնամ, որ ինձմէ ետք եկող սերունդները հայրենասէր ըլլան եւ հպարտ զգան իրենց հայ ինքնութեամբ:

Փաթիլ Ղազարեան

Բարեւ պարոն Մուշեղ Իշխան.
Ես Սերժ Գոյումճեանն եմ: Շատ շնորհակալ եմ, որ դուք ձեր բանաստեղծութիւններով շատ կարեւոր բաներ կ'ասանդէք մեզի: Օրինակ՝ պէտք է միշտ հայերէն խօսինք, որպէսզի մշտանորոգ պահենք մեր լեզուն, եւ որ դարձ դար հայ ժողովուրդին ճրագները միշտ լոյս տան, եւ օճախին հուրը միշտ վառ մնայ: Նաեւ աշխարհի չորս ծագերուն խաժամուժներուն մէջ, մենք մեր լեզուն պիտի գործածենք եւ պիտի չկորսնցնենք մեր ինքնութիւնը:

Հայերէն լեզուն գործածելը շատ աղուոր զգացումներ կու տայ մեզի, ինչպէս նաեւ տաքութիւն, սէր, հպարտութիւն, ինքնավստահութիւն եւ ամէնէն կարեւորը՝ ազատութիւն:

Սերժ Գոյումճեան

Բարեւ սիրելի ճարտարապետ Մուշեղ Իշխան.
Կ'ուզեմ ձեզի շնորհակալութիւն յայտնել, որ տիւ եւ գիշեր տքնեցաք, որպէսզի «Հայ լեզուն տունն է հայուն» բանաստեղծութիւնը ստեղծէք: Այս ոտանատրին հետ կապուած խմբային շատ աշխատանքներ ըրինք: Օրինակ՝ անոր բառերն ու իմաստները գծեցինք:

Այս բանաստեղծութիւնը մեզի շատ բաներ սորվեցուց: Առաջին՝ եթէ հայերէն չխօսինք, կրնանք խաժամուժի մը մէջ գտնուիլ եւ ծուլուիլ: Երկրորդ՝ բուք ու բորաններէ հեռու մնալու համար, պէտք է կրկին հայերէն խօսինք եւ քանի որ Հայաստան չենք ապրիր, պէտք է մեր կրօնքն ու ինքնութիւնը պահենք՝ մեր լեզուն խօսելով:

Ես շատ հպարտ, ապահով եւ հայ կը զգամ, երբ հայերէն կը խօսիմ: Մ ե ր դպրոցը 50 տարի ապրած է, եւ ձեզի կը խոստանամ, որ դեռ դարեր պիտի ապրի, որովհետեւ միշտ հայերէն պիտի խօսինք:

Երբ մեծնամ, հայերէն գիրքեր շատ պիտի կարդամ, աւելի շատ հայկական ճաշեր պիտի ուտեմ եւ շատ աւելի հայկական երգ ու երաժշտութիւն մտիկ պիտի ընեմ: Ապագային մեր լեզուն աւելի գեղ, վեհութիւն ու պերճանք պիտի ունենայ:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի, որ մեր դպրոցը այցելեցիք:

Սաշա Ապտո

Բարեւ պարոն Մուշեղ Իշխան.
Անունս Հենրիք Խազնաճեան է եւ Սուրբ Յակոբ վարժարանի վեցերորդ դասարանի աշակերտ եմ:

Շատ ուրախ եմ, որ կրցայ տեսնել ձեզ, որովհետեւ դուք շատ նշանաւոր անձ մըն էք: Կ'ուզեմ ձեզի հետ խօսիլ ձեր գրած «Հայ լեզուն տունն է հայուն» բանաստեղծութեան մասին: Կրնամ ըսել, որ շատ բան սորվեցայ այդ ոտանատրին: Սորվեցայ, որ եթէ մենք ետեւ դառնանք ու նայինք մեր անցաւին, կը տեսնենք, որ մեր պատմութիւնը շատ հին է ու անսպառ: Նոր բառեր ալ սորվեցայ, ինչպէս՝ բուք, բորան, խաժամուժ, մշտանորոգ եւ շատ աւելին:

Ինձի համար շատ տպաւորիչ էր, որ դուք տասնվեց-տասնեօթը տարեկանէն սկսած էք գիրքեր եւ բանաստեղծութիւններ գրել: Շատ շնորհակալ եմ:

Ձեզի կրնամ ըսել, որ ապագային իմ ժողովուրդիս օգնելու համար, հայերէն լեզուի եւ Հայոց Պատմութեան ուսուցիչ կ'ուզեմ ըլլալ: Շատ աղուոր բառեր կ'ուզեմ սորվեցնել աշակերտներուս եւ բացատրել, թէ ինչպէս սկսած է մեր պատմութիւնը: Կ'ուզեմ իրենց ըսել նաեւ, որ ուր որ երթան, միշտ հայերէն խօսին, որպէսզի մեր հայրենի լեզուն չկորսնցնենք:

Հենրիք Խազնաճեան

Այս առտու երագէ մը արթնցայ: Երագիս մէջ Մուշեղ Իշխանին հանդիպեցայ: Դպրոցն էի, երբ գինք տեսայ: Մօտեցայ իրեն ու ըսի. «Բարեւ պարոն Մուշեղ Իշխան, ինչպէ՞ս էք: Ես Կապրիէլ Ապրաքեանն եմ: Ես արդէն շատ լաւ կը ճանչնամ ձեզ եւ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ձեզի, որովհետեւ դուք տիւ եւ գիշեր աշխատեցաք՝ հայ լեզուին տալու գեղ ու պերճանք: Դուք Մետրոպ Մաշտոցին պէս ճարտարապետ եղաք: Դարձ մը աւելի է, որ հայ լեզուն բուք ու բորանի մէջ է, բայց ձեզի պէս մարդիկ հայ լեզուն կը պաշտպանեն: Դուք ինձի եւ բոլոր հայերուն համար ամենալուսաւոր ճրագն էք, որովհետեւ տասնվեց-տասնեօթ տարեկանէն բանաստեղծութիւններ կը գրէք, որպէսզի մենք չմոռնանք մեր լեզուն եւ պահենք մեր ինքնութիւնը: Մենք դեռ հոս ենք, զօրաւոր, հպարտ, ուրախ եւ ամենակարեւորը՝ հայ:

Ես, որպէս գանատահայ, կը խոստանամ, որ միշտ հայերէն պիտի խօսիմ, հայերէն պիտի կարդամ եւ միշտ հայ պիտի մնամ»:

Կապրիէլ Ապրաքեան

Բարի լոյս, պարոն Մուշեղ Իշխան.
Շատ ուրախ եմ ձեզի հանդիպելու համար: Անունս Արմէն է եւ վեցերորդ կարգի աշակերտ եմ: Դասարանէն ներս ձեր գրութիւնները կը կարդանք եւ բանաստեղծութիւնները կը սորվինք: Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ձեզի, որովհետեւ դուք ամէն խաժամուժէ եւ բուք ու բորանէ շատ ապահով կը պահէք մեզ: Նաեւ կ'ուզեմ ձեզի ըսել, որ դուք ինձի համար շատ կարեւոր անձ մըն էք:

Ձեզի կը խոստանամ, որ երբ մեծնամ, աշխարհի չորս ծագերը պիտի շրջիմ ու ձեր բանաստեղծութիւնները պիտի ասանդեմ հայ փոքրիկներուն: Նաեւ կը խոստանամ ձեր բոլոր գրութիւնները կարդալ եւ հպարտ հայ մը ըլլալ:

Ձեզի բարի ճանապարհ կը մաղթեմ, եւ Աստուած միշտ ապահով պահէ ձեզ:

Արմէն Մարգարեան



ՁԵՌԱՅԻՆ

Նոր Տարուան առթիւ եթէ կը փափաքիս շնորհատրական բացիկ դրկել քու ազգականներէդ կամ բարեկամներէդ մէկուն, կրնաս դուն պատրաստել այս գեղեցիկ բացիկը: Պէտք ունիս՝ ճերմակ խաւաքարտ, կանաչ բուրդ, գունաւոր հլուններ, ասեղ եւ ոսկեգոյն մատիտ:

Այս գեղեցիկ աշխատանքը կրնաս օգտագործել սեղանը զարդարելու համար: Ասոր համար պէտք ունիս՝ տարբեր չափի կարմիր գնդակներ, փայտի կտոր մը, բամպակ, թարմ կամ արհեստական եղելինի ճիւղ մը, արհեստական տօնածառ, նուէրի տուփիկ, մարգարիտներ եւ խէժ:



ՍԻՐԱՄԱՐԳ

Սիրամարգը կը պատկանի հաւերու ընտանիքին: Ան գեղեցիկ պոչով մեծ թռչուն մըն է եւ կրնայ ապրիլ մինչեւ քսան տարի:

Արու սիրամարգը կ'ունենայ կապոյտ-կանաչ փետուրներ, ճոխ կլոր զարդարանքներով՝ աչքի նմանող: Ան իր գեղեցիկ փետուրները կը ցուցադրէ, երբ էգ սիրամարգ մը տեսնէ:

Կարելի է գտնել տարբեր գոյնի սիրամարգներ՝ կապոյտ, կանաչ, սպիտակ, բաց սրճագոյն եւ մանիշակագոյն:

Հնդկաստանի կապոյտ սիրամարգը ամէնէն շատ տարածուած տեսակն է եւ կը համարուի Հնդկաստանի ազգային թռչունը:

Սիրամարգները կը սնանին բոյսերով, նաեւ միջատներով ու մողէզներով:

Սիրամարգը կը քալէ հպարտ ու իր շքեղութեամբ կը հրապուրէ զինք դիտողները:



Ո՞Վ ԿՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ

1. Ինչ կը նշանակէ Նաւասարդ:

- ա- Սարդին տունը
- բ- Նոր Տարի
- գ- Նաակ

2. Ինչո՞ւ երդիքներէն գոյնզգոյն գուլպաներ կը կախէին:

- ա- Որպէսզի տունը զարդարէին
- բ- Որպէսզի ուրախ ըլլային
- գ- Որպէսզի Նոր տարուան նուէրներ յայտնուէին

3. Ո՞վ է Պարոյր Սեւակ:

- ա- Հայ նշանաւոր բանաստեղծ մը
- բ- Հայ ազնիւ երաժիշտ մը
- գ- Հայ ճաշակաւոր գեղանկարիչ մը

4. «Անլռելի Զանգակատուն» վիպերգը որո՞ն ստեղծագործութիւնն է:

- ա- Սայաթ Նովայի
- բ- Պարոյր Սեւակի
- գ- Կոմիտաս Վարդապետի

5. Պարոյր Սեւակ ծնած է 24 Յունուար 1924-ին, ուրեմն 2024-ին նշուեցաւ իր ծննդեան՝

- ա- 50-ամեակը
- բ- 100-ամեակը
- գ- 150-ամեակը

6. Ո՞վ է Մարտիրոս Սարեան:

- ա- երաժիշտ
- բ- գեղանկարիչ
- գ- մարզիկ

7. Հայաստանի մէջ Մարտիրոս Սարեանին պատկերը ո՞ր կրնանք տեսնել:

- ա- հայելիին մէջ
- բ- թուղթին վրայ
- գ- Հայաստանի նամակադրոշմին եւ 20,000-նոց թղթադրամին վրայ

8. Ո՞ր թաղուած է Մարտիրոս Սարեան:

- ա- Երեւանի Կոմիտասի Պանթէոնին մէջ
- բ- Երեւանի զբօսայգիին մէջ
- գ- Եկեղեցոյ բակին մէջ

9. Սիրամարգը ո՞ր երկրին ազգային թռչունը կը համարուի:

- ա- Ճափոնի
- բ- Չինաստանի
- գ- Հնդկաստանի

10. Ինչո՞վ յայտնի է սիրամարգը

- ա- իր աչքերով
- բ- իր փետուրներով
- գ- իր ականջներով



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւը պատրաստեց Շողիկ Ազարիկեան
Ձեայղացք՝ Լորի Խաչերեանի